ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ — Երկերի լիակատար ժողովածու (3 հատորով), հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 594 էջ։

Դ. Վարուժանի «Երկերի լիակատար ժողովածուի» 1-ին հատորն ընդգրկում է «Սարսուռներ» (1902—1905), «Յեղին սիրտը» (1904—1909) ժողովածուները, իսկ «Ծաղկեփունջ կամ բլգնիկցիի մը նվագները» շարքը և տետրերից չհրատարակված մասը («Մրրկահույզ կայծորիկներ» և «Փուշի ակոսներ») տեղ են գտել Հավելվածում։

Հատորն ունի նաև Տարբերակներ, Բնագրային տարբերություններ և Ծանոթագրություններ, որտեղ տեղեկություններ են հաղորդվում հեղինակի ինքնագրերի, նրա կենդանության օրոք տպագրված բանաստեղծությունների և դրանց ստեղծագործական պատմության մասին։ Ժողովածուն կազմելիս օգտագործվել է նաև 1900—1915 թթ. արևմտահայ պարբերական մամուլը՝ լրագրեր, շաբաթաթերթեր, տարեգրքեր, զանազան հավաքածուներ։

Հատորի խմբագիրն է բան. գիտ. դոկտոր Ա. Ս. Շարուրյանը։

ՓԱՅԱԿ ԱՆԹԱՊՅԱՆ — Վարդան Արևելցի։ Կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 385 էջ։

Աշխատության մեջ ներկայացվում է միջնադարյան Հայաստանի հասարակական կյանքի հանրագիտակ՝ ատամիչ, աշխարհագետ, քերական, իրավագետ, գրող, ճարտասան, թարգմանիչ Վարդան Արևելցու կյանքը և գործունեությունը։ Գիրքն ունի ութ գլուխ, որոնց մեջ խոսվում է Վ. Արևելցու պատմաբանասիրական, մատենագիտական, աղբյուրագիտական հետազոտությունների մասին և տրվում դրանց գիտական-գաղափարական և լեզվաոճական վերլուծությունն ու գնահատությունը։

Հատուկ ուշադրություն է նվիրված Վ. Արևելցու մանկավարժական և թարգմանական գործունեությանն ու անհատականության բացահայտմանը։ Գիրքն ունի օգտագործված գրականություն, անձնանունների և տեղանունների ցանկեր։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Լ. Հ. Տեր-Պետրոսյանը։

Գ. Ե. ՊԱՎԼՈՎԱ — Մ. Վ. Լոմոնոսով։ Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 250 էջ։

Ռուս մեծ գիտնական Մ. Վ. Լոմոնոսովին նվիրված այս գրքում օգտագործված են ռուսական գիտության հիմնադրի կյանքը և ստեղծագործությունը ներկայացնող փաստաթղթեր, որոնց միջոցով տրվում է Մ. Վ. Լոմոնոսովի գիտական հայացքների ձևավորման ընթացքը, գիտական գործունեության կապվածությունը արդյունաբերության ու մշակույթի զարգացմանը, Պետերբուրգի գիտությունների ակադեմիային, որտեղ նա անընդմեջ աշխատել է գրեթե քառորդ դար։

Գրքի առաջին մասում արտասովոր արտահայտչականությամբ բացահայտված են Մ. Վ. Լոմոնոսովի կյանքի մանրամասները, իսկ երկրորդ մասում՝ աշխարհայացքը, խոսվում է նրա կատարած գիտական հետազոտությունների մասին, ներկայացվում են ֆիզիկայի, աստղագիտության և կիրառական օպտիկայի, աշխարհագրության և օդերևութաբանության, պատմության և էկոնոմիկայի բնագավառի աշխատությունները։ Հետաքրքրությամբ է ընթերցվում նաև Մ. Վ. Լոմոնոսովն իբրև բանաստեղծ, գրող, գեղանկարիչ բաժինը։

Պատասխանատու խմբագիր՝ Ռ. Հ. Հարությունյան։

ՌՈՒԶԱՆ ՆԱՆՈՒՄՅԱՆ — Մերենց, կյանքը և գործը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 218 էջ։

Մենագրության առաջին մասը նվիրված է հայ ականավոր գրող, պատմա-ռոմանտիկական վեպի հիմնադիր, հասարակական գործիչ, հրապարակախոս Մերենցի (Հովսեփ Շիշմանյան) կյանքին ու ստեղծագործությանը։ Գրողի կյանքի ու հրապարակախոսական գործունեության բազմաթիվ էջեր այստեղ արժանացել են խոր վերլուծության (գրողի գաղափարական հասունությունը, Մերենցը 1850—1852 թթ. հակահասունյան շարժման պարագլուխ, Զեյթունի ապստամբության շրջանում, ազգային հարցի լուծման նրա բաղձանքները)։

Մենագրության երկրորդ մասում ներկայացված են Մերենցի նորարարական սկզբունքները, որոնցով մեր գրականության մեջ սկիզբ է դրվել դասական պատմավեպագրությանը։ Պարզաբանվում են կլասիցիստական ողբերգություններից և ռոմանտիկական դրամայից պատմավեպի տարբերիչ գծերը, գաղափարական միտումները, ազգային-սոցիալական-քաղաքական հարցերի նոր լուծումները, որոնց մեջ արտացոլվում են ժողովուրդների պատմական առաջադիմության փորձը և ձգտումը՝ տեսնել ազգը, ժողովուրդը, անհատը ազատագրված ամեն տեսակի բռնության կապանքներից։ Գիրքն ունի ծանոթագրությունների բաժին։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Վլ. Ա. Կիրակոսյանը։

«ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐ», 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 178 էջ։

Ժողովածուում զետեղված են 12 հոդված։ Դրանցում խոսվում է ժամանակակից հայ գեղարվեստական արձակի լեզվի, խոսքի մշակույթի և տերմինաբանության արդի վիճակի ու զարգացման հեռանկարների, գեղարվեստական գրականության լեզվում խոսակցական լեզվի տարրերի մասին, լուսաբանվում են ժամանակակից հայերենում հարանուն բառերի ոճական կիրառության, բառագործածության ոճական սխալների, լեզվի զարգացման գործընթացում արտաքին փոխառությունների տեղի, անվանագիտական տերմինարանի, լեզվապլանավորման թույլատրելի սահմանների որոշման սկզբունքների հարցերը։ Հոդվածներ են նվիրված նաև բառային նորաբանություններ, գրական հայերենի շեշտի, գործառական ոճերի շարքում գեղարվեստական ոճի առանձնահատկությունների և նրա տեղի, հայերեն էլեկտրատեխնիկական տերմինների ստեղծման խնդիրներին։ Հոդվածներն ունեն ծանոթագրություններ, համառոտագրություններ և հապավումների ցանկ։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Գ. Վ. Վահանյանը։

ՌԻՄԱ ՇԱԼՈՒՆՑ — Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987; 232 էջ։

Աշխատության ութ գլուխներում ներկայացվում են ժամանակակից լրագրային լեզվի ուսումնասիրության պատմությունը, լրագրահրապարակախոսական ոճի և լրագրային ժանրերի մի քանի առանձնահատկությունները, վեր են հանվում բառիմաստային հիմնական խմբերը, դարձվածքները, գիտական ոճի տարրերը, նորաբանությունները։ Գրքում բացահայտվում են «լրագրային ստանդարտը», «լրագրային շտամպը» և հայերենին սենհարազատ, սխալ ձևերի կիրառությունները։ Գիրքն ունի ծանոթագրություններ և օգտագործված նոր բառերի ու կապակցությունների ցանկ։

Գրքի պատասխանատու խմբագիրներն են Վ. Ա. Քոսյանը և Հ. Ա. Օհանյանը։